# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 հունիսի 2023 թվականի N 222 - Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ և ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «ՀՀ կառավարության որոշումը առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշման հավելված 1-ի 64-րդ կետը.

**ո ր ո շ ու մ ե մ.**

1.Հաստատել՝

1) Սյունիքի մարզային ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի թեստային առաջադրանքների հարցաշարերը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի թեստային առաջադրանքների հարցաշարերը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Սյունիքի մարզային ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հարցազրույցի առաջադրանքների հարցաշարերը՝ համաձայն N 3 հավելվածի (հրապարակման ենթակա չէ),

4) Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հարցազրույցի առաջադրանքների հարցաշարերը՝ համաձայն N 4 հավելվածի (հրապարակման ենթակա չէ):

16.06.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. հունիսի 16
ք. Կապան